



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ

ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշում Քաղաքացիական գործ N 2279/02/13թ.
Քաղաքացիական գործ N 2279/02/13թ.
Նախագահող դատավոր՝ Կ. Սաղյան
Դատավորներ՝ Հ. Աբրահամյան
Ն. Գրիգորյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ք. Ստեփանակերտ 12-ին մայիսի 2015թ.

ԼՂՀ Գերագույն դատարանը (այսուհետ՝ Գերագույն դատարան) վճռաբեկության կարգով.

նախագահությամբ՝ դատավոր Ի. Կարապետյանի
դատավորներ՝ Ա. Աբրահամյանի
Վ. Հովսեփյանի

դոմբաց դատական նիստում քննելով ըստ հայցի Աշոտ Բորիսի Դանիելյանի՝ ընդդեմ Սամվել Ալեքսեյի Ավետիսյանի՝ տնամերձ հողամասը և տան բնակելի մակերեսն ուրիշի ապօրինի տիրապետումից հետ պահանջելու մասին քաղաքացիական գործով ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2015թ. մարտի 19-ի որոշման դեմ հայցվոր Աշոտ Բորիսի Դանիելյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

2013թ. դեկտեմբերի 3-ին Աշոտ Բորիսի Դանիելյանը /այսուհետ՝ նաև Հայցվոր/ հայցադիմում է ներկայացրել ընդդեմ Սամվել Ալեքսեյի Ավետիսյանի /այսուհետ՝ նաև Պատասխանող/՝ 81.77 քառ. մետր մակերեսով տնամերձ հողամասը և 1 քառ. մետր մակերեսով բնակելի տան մակերեսն ապօրինի տիրապետումից հետ պահանջելու վերաբերյալ:

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի /այսուհետ՝ նաև Դատարան/ 2015թ. հունվարի 13-ի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն. Սամվել Ալեքսեյի Ավետիսյանին պարտավորեցվել է Աշոտ Բորիսի Դանիելյանին վերադարձնել թիվ ՀՎ՝ 03313/14 առ 14.08.2014թ. փորձագետի եզրակացության թիվ 4 հավելվածում նշված Ստեփանակերտ քաղաքի Կնունյանցների փողոցի թիվ 19 բնակելի տան և տնամերձ հողամասի 44 քառ. մետր մակերեսով տարածքը. բացառությամբ թիվ 3 հավելվածում նշված 1.11 քառ. մետր մակերեսով վերածածկված հողատարածքի:

Նշված վճռի դեմ 2015թ. փետրվարի 9-ին վերաքննիչ բողոք է բերել պատասխանող Սամվել Ալեքսեյի Ավետիսյանը:

ԼՂՀ վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2015թ. մարտի 19-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարվել է և ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2015թ. հունվարի 13-ի վճիռը բեկանվել է և գործն ուղարկվել նույն դատարան՝ լրիվ ծավալով նոր քննության:

Նշված որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել հայցվոր Աշոտ Բորիսի Դանիելյանը:

Գերագույն դատարանի 2015թ. ապրիլի 27-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոք բերած անձը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի որոշակի խախտումներ: Մասնավորապես, վերաքննիչ դատարանը խախտել է ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 273-րդ և 274-րդ հոդվածների, ինչպես նաև ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 122-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջները:

Նշված պնդումը բողոք բերողը հիմնավորում է հետևյալ փաստարկներով.

Ստեփանակերտ քաղաքի Կնունյանցների 19-ի հասցեում գտնվող բնակելի տունը /48քմ/ կից հողամասով /800քմ/ իր պապը՝ Ալեքսանդր Գերասիմի Դանիելյանը Սաթենիկ Կարապետի Բաղդասարովայից 1952թ. սեպտեմբերի 26-ի առ ու ծախի պայմանագրով ձեռք է բերել ի սեփականություն: Նույն թվականի սեպտեմբերի 26-ին իր պապը նշված բնակելի տան և հողամասի նկատմամբ իր անվամբ ստացել է տեխնիկական անձնագիր: 1952թ. սեպտեմբերի 30-ին նրան համապատասխան հողային գրությամբ հատկացվել է նաև 200 քառ. մետր հողամաս, որը մտցվել է տեխնիկական անձնագրի մեջ: Ժառանգությամբ նշված տունը Ա.Դանիելյանից փոխանցվել է իր հորը՝ Բորիս Ալեքսեյի Դանիելյանին, որը 2000թ. զոհվել է ծառայողական պարտականությունները կատարելիս, և տունը ժառանգաբար անցել է իրեն: 2001թ. նոյեմբերի 12-ին ինքը ստացել է տվյալ տան նկատմամբ N 003868 սեփականության իրավունքի վկայական: Կնունյանցների փողոցի թիվ 19 բնակելի տունը և հողամասը ինքը բաժանել է երկու առանձին մասերի և 2009թ. մարտի 10-ին թիվ 4-35 միասնական մատյանի 103034 համարի տակ ու թիվ 4-35 միասնական մատյանի 103033 համարի տակ գրանցվել են իր

սեփականության իրավունքները: Տնամերձ հողամասի չափերը կազմել են համապատասխանաբար 371 քառ. մետր ու 500 քառ. մետր: Նշված 500 քառ. մետր մակերեսով տնամերձ հողամասի ու 83.64 քառ. մետր մակերեսով բնակելի տան նկատմամբ 2009թ. տրվել է թիվ 098117 սեփականության իրավունքի վկայական:

Բողոքաբերը նշել է, որ Ստեփանակերտ քաղաքի Գ.Նժդեհ 66 հասցեում բնակվող իրենց հարևանը՝ պատասխանող Ս.Ա. Ավետիսյանը, ապօրինի մտել է իրեն պատկանող հողամաս և ապօրինի վերցնելով այնտեղից 1.11 քառ. մետր տարածք, դրա վրա կառուցել է շինություն՝ ավելացնելով իր տան մակերեսը: Ներկայումս այդ տարածքը օգտագործվում է նրա կողմից որպես սենյակի պահարան՝ դրանով իսկ խախտելով իր կողմից հետագայում կառուցած ննջարանի երկրաչափական ձևը և նվազեցնելով դրա մակերեսը: Իրենք բազմիցս այդ պատի հարցով դիմել են Ս.Ավետիսյանին, սակայն նա չի համաձայնվում վերադարձնել օրենքով իրենց պատկանող բնակմակերեսը, և հենց նա էլ իրեն առաջարկել է տվյալ հարցով դիմել դատարան:

Վերջերս ինքը կառուցել է մի քանի օժանդակ շինություններ վերը նշված 500 քառ. մետր հողամասում և այդ պատճառով փորձել է վերցնել նոր վկայական: Համապատասխան մասնագետների չափումների արդյունքում պարզվել է նաև, որ հողամասի ընդհանուր մակերեսը 81.77 քառ. մետրով նվազել է թիվ 098117 վկայականում նշված չափի համեմատ, ինչի մասին 10.06.2013թ. ԼՂՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ «Գեոդեզիայի, քարտեզագրության և անշարժ գույքի գնահատման կետրոն» ՊՈԱԿ-ի կողմից տրվել է մասնագիտական եզրակացություն: Փաստորեն, տվյալ տարածքը ցանկապատելով, այն ապօրինի զավթել է իրենց նույն հարևանը՝ Սամվել Ալեքսեյի Ավետիսյանը: Հետագայում պարզվել է նաև, որ Ս. Ավետիսյանը առանց որևէ իրավական հիմքերի իրեն համապատասխան օրինավոր փաստաթղթերով պատկանող 1.11 քառ. մետր մակերեսով տնամերձ բնակելի տան մակերեսը ձևակերպել է իր անունով՝ մտցնելով այն 2001թ. ստացած սեփականության իրավունքի վկայականի մեջ:

Բողոքաբերը նշում է նաև, որ այդ հարցով ինքը նույնպես դիմել է Ս. Ավետիսյանին, սակայն վերջինս հրաժարվում է վերադարձնել նաև այդ ապօրինի զավթած հողակտորը՝ առաջարկելով դիմել դատարան: Փաստորեն, Ս. Ավետիսյանը սահմանափակել է իր սեփականությունը հանդիսացող գույքի տիրապետման, օգտագործման և տնօրինման իրավունքները, իսկ վերաքննիչ դատարանն իրեն զրկել է իր սեփականության իրավունքը վերականգնելու հնարավորությունից և անհիմն կերպով քաղաքացիական գործն ուղարկել է դատարան՝ լրիվ ծավալով նոր քննության: Այդ այն դեպքում, երբ վերաքննիչ դատարանը չի ստուգել Սամվել Ավետիսյանին տրված 2001թ. սեփականության իրավունքի վկայականի ձեռքբերման իրավական հիմքերը, ինչպես նաև այն հանգամանքը, թե ինչպես է այդ վկայականում հայտնվել օրինավոր փաստաթղթերով իրեն պատկանող 1.11 քառ. մետր բնակմակերեսը, որը բացակայում էր այդ տան հին փաստաթղթերում: Վերաքննիչ դատարանը, նշելով, որ փորձագետի կողմից կասկածի տակ դրված 76.3 քառ. մետր հողատարածքի մասով եզրահանգումը չի կարող դրվել գործի լուծման հիմքում, և դա ունի էական նշանակություն, անհիմն կերպով անտեսել է այն հանգամանքը, որ այդ փաստն ընդհանրապես կապ չունի իր հայցադիմումում ներկայացված պահանջի հետ, որում ինքը վիճարկում է ոչ թե պատասխանողի զբաղեցրած հողամասի ու տան

համապատասխանությունը կամ ճշտությունը տան վկայականում նշվածի նկատմամբ, այլ նպատակ էր հետապնդում վերադարձնել օրինավոր հիմքերով իրեն պատկանող հողամասը և բնակնակերեսը, իսկ վերաքննիչ դատարանի որոշման մեջ առկա է այն պնդումը, որ դատարանը ոչ լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ չի հետազոտել ապացույցները և հայցը մասնակիորեն բավարարել է միայն փորձագետի եզրակացության հիման վրա, ինչը նույնպես չի համապատասխանում իրականությանը, քանի որ դատարան էր ներկայացվել գործին առնչվող բոլոր փաստաթղթերը՝ այդ թվում 1952թ. տան տեխնիկական անձնագիրը, 1952թ. սեպտեմբերի 30-ի հողային գրառումը, որոնցով հաստատվում է, որ իր պապին հատկացվել է 800 քառ. մետր մակերեսով տնամերձ հողամաս, որի մեջ ընդգրկված էր նաև վիճարկվող հողամասը, ինչպես նաև 200 քառ. մետր մակերեսով հողատարածք, որն ավելացվել է այդ հողամասին՝ համապատասխան հողային գրությամբ ու փաստացի հողամասը կազմել է 1000 քառ. մետր, իսկ ներկայումս այն կազմում է 871 քառ. մետր, ինչն էլ վկայում է, որ այն նվազել է Պատասխանողի կողմից կատարված զավթման հետևանքով, հետևաբար դատարանի վճիռը ճիշտ էր և հիմնավորված:

Բողոքաբերը գտնում է, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Գերագույն դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, քանի որ սույն գործով ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանը և ԼՂՀ վերաքննիչ դատարանը կայացրել են տարբեր դատական ակտեր:

Բողոք բերող անձը խնդրել է ամբողջությամբ բեկանել ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2015թ. մարտի 19-ի որոշումը և օրինական ուժ տալ ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2015թ. հունվարի 13-ի վճիռին:

3. Բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. 2001թ. նոյեմբերի 12-ի թիվ 0003868 անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի համաձայն՝ Ստեփանակերտ քաղաքի Կնունյանցների փողոցի թիվ 19 հասցեում գտնվող 83.64 քառ. մետր մակերեսով բնակելի տունը և 871.43 քառ. մետր մակերեսով հողամասը սեփականության իրավունքով պատկանում են Աշոտ Բորիսի Դանիելյանին:

2. 2009թ. մարտի 10-ի թիվ 098117 անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի համաձայն՝ Ստեփանակերտ քաղաքի Կնունյանցների փողոցի թիվ 19 հասցեում գտնվող 83.64 քառ. մետր մակերեսով բնակելի տունը և 500 քառ. մետր մակերեսով հողամասը սեփականության իրավունքով պատկանում են Աշոտ Բորիսի Դանիելյանին:

3. 2009թ. մարտի 10-ի թիվ 098116 անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի համաձայն՝ Ստեփանակերտ քաղաքի Կնունյանցների փողոցի թիվ 19 հասցեում գտնվող 14.44 քառ. մետր մակերեսով սանհանգույցը և 371 քառ. մետր մակերեսով հողամասը սեփականության իրավունքով պատկանում են Աշոտ Բորիսի Դանիելյանին:

4. 2001թ. նոյեմբերի 14-ի թիվ 0000037 անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի համաձայն՝ Ստեփանակերտ քաղաքի Գ.

Նժդեհ փողոցի թիվ 66 հասցեում գտնվող 145.97 քառ. մետր մակերեսով բնակելի տունը և 363.54 քառ. մետր մակերեսով հողամասը սեփականության իրավունքով պատկանում են Սամվել Ալեքսեյի Ավետիսյանին: Նշված գրանցման համար հիմք է հանդիսացել 05.10.1999թ. ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը:

5. Համաձայն 1999թ. հոկտեմբերի 5-ի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի՝ 1993թ. ապրիլի 25-ին մահացած Մարուսյա Բախշիի Ավետիսովայի մահից հետո նրա թոռ Սամվել Ալեքսեյի Ավետիսյանը ժառանգել է Ստեփանակերտ քաղաքի Գ. Նժդեհ փողոցի թիվ 66 բնակելի տունը, որի տնամերձ հողամասի մակերեսը կազմում է 363.54 քառ. մետր:

6. 2014թ. օգոստոսի 14-ի Հմ՝ 03313/14 շինարարատեխնիկական փորձաքննության եզրակացության «Հետևություններ» մասի համաձայն՝ «Ըստ թիվ 0003868 առ 12.11.2001թ. սեփականության իրավունքի գրանցման վկայականի, Աշոտ Բորիսի Դանիելյանին սեփականության իրավունքով պատկանող Ստեփանակերտ քաղաքի Կնունյանցների փողոցի թիվ 19 բնակելի տան և տնամերձ հողամասի 44 քառ. մետր մակերեսով տարածքը գտնվում է պատասխանողի՝ Գ.Նժդեհ 66 բնակելի տան սեփականատիրոջ տիրապետման տակ /հավելված 4/»:

4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի և հիմնավորումների սահմաններում՝ Գերագույն դատարանը գտնում է, որ բողոքը ենթակա է բավարարման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ Սահմանադրության 33-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետել, օգտագործել, տնօրինել և ժառանգել օրինական հիմքերով որպես սեփականության ձեռք բերած գույքը: Սեփականությունից կարող է զրկել միայն դատարանը՝ օրենքով նախատեսված դեպքում: Սեփականության օտարումը հասարակության և պետության կարիքների համար կարող է կատարվել միայն բացառիկ դեպքերում՝ օրենքով սահմանված կարգով, նախնական համարժեք փոխհատուցմամբ:

ԼՂՀ Սահմանադրության 44-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր սեփականության հարգման իրավունք: Ոչ ոք չի կարող զրկվել իր սեփականությունից այլ կերպ, քան միայն ելնելով հասարակության շահերից և օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով նախատեսված պայմաններում:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սեփականության իրավունքը սուբյեկտի՝ օրենքով և այլ իրավական ակտով ճանաչված ու պահպանվող իրավունքն է՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 274-րդ հոդվածի համաձայն՝ սեփականատերն իրավունք ունի իր գույքը հետ պահանջել ուրիշի ապօրինի տիրապետումից:

Շարադրված սահմանադրական դրույթներից և քաղաքացիական օրենսդրության նշված հոդվածներից հետևում է, որ գույքի տիրապետման, տնօրինման և օգտագործման՝ սեփականատիրոջ իրավագործությունները մեծ կարևորության իրավական արժեքներ են, որոնք ունեն սահմանադրական բնույթ: Սեփականության իրավունքի սահմանադրական արժեքի կարևորությամբ է պայմանավորված մասնավորապես ԼՂՀ Սահմանադրության մեջ հետևյալ երաշխիքների ամրագրումը.

1. սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքից անձը կարող է զրկվել բացառապես օրենքով նախատեսված դեպքերում և օրենքով նախատեսված հիմքերով,

2. սեփականատիրոջ կամքին հակառակ սեփականության իրավունքը կարող է դադարեցվել միայն դատական կարգով՝ դատարանի որոշմամբ:

Ինչպես հետևում է գործի նյութերից, Դատարանը, հետազոտելով կողմերին պատկանող բնակելի տների սեփականության իրավունքի վկայականները և այլ փաստաթղթերը՝ այդ թվում Հայցվորին պատկանող բնակելի տան տեխնիկական անձնագիրը և 1952թ. հողային գրությունը, շինարարատեխնիկական փորձագետի եզրակացությունը, հաստատված է համարել, որ հայցվոր Աշոտ Բորիսի Դանիելյանին սեփականության իրավունքով պատկանող Ստեփանակերտ քաղաքի Կնունյանցների փողոցի թիվ 19 բնակելի տան տնամերձ հողամասի 44 քառ. մետր մակերեսով տարածքը գտնվում է պատասխանողի՝ Գ. Նժդեհ փողոցի թիվ 66 բնակելի տան սեփականատիրոջ՝ Սամվել Ալեքսեյի Ավետիսյանի տիրապետման տակ, ու մասնակիորեն բավարարել է հայցը:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 43-րդ հոդվածը սահմանում է գործով ապացույցների տեսակները, որոնց թվում են դասվում նաև փորձագետի եզրակացությունները:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Գերագույն դատարանը հարկ է համարում փաստել, որ համաձայն ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 3-րդ մասի՝ փորձագետի եզրակացությունը հետազոտվում է դատական նիստում և գնահատվում մյուս ապացույցների հետ: Նույն հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննությունը նշանակվում է դատարանի որոշմամբ, որում շարադրվում են նաև դատարանի պատճառաբանությունները՝ նախկինում տրված փորձագիտական եզրակացությունների հետ նրա անհամաձայնության վերաբերյալ:

Սույն գործով վերաքննիչ դատարանը Դատարանի վճիռը բեկանելով և գործը նոր քննության ուղարկելով, մատնանշել է, որ նոր քննության ընթացքում անհրաժեշտ է պարզել, թե Պատասխանողի կողմից փաստացի տիրապետվող հողամասն արդյո՞ք համապատասխանում է նրա սեփականության իրավունքի գրանցման վկայականում արտացոլված հատակագծին, և արդյո՞ք նա

տիրապետում է Հայցվորին պատկանող որևէ հողամաս, որի լուծման համար անհրաժեշտ է համարել նշանակել կրկնակի դատաշինարարական փորձաքննություն, այն դեպքում, երբ Դատարանը, կասկածներ չունենալով առաջին փորձաքննության եզրակացության արժանահավատության կամ հիմնավորվածության վերաբերյալ, հիմնավոր մերժել էր լրացուցիչ և կրկնակի փորձաքննություններ նշանակելու մասին պատասխանողի միջնորդությունները, քանի որ այն պարզ ու ամբողջական էր, և կասկածներ չկային նշված եզրակացության արժանահավատության ու հիմնավորվածության վերաբերյալ:

Համաձայն ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերի՝ Դատարանը կարող է լրացուցիչ փորձաքննություն նշանակել, եթե եզրակացությունը բավականաչափ պարզ կամ ամբողջական չէ և կրկնակի փորձաքննություն նշանակել, եթե այն արժանահավատ կամ հիմնավորված չէ կամ մի քանի փորձագետների եզրակացությունների միջև կան հակասություններ:

Վերոշարադրյալների հիման վրա Գերագույն դատարանը փաստում է, որ Դատարանը սույն գործը քննելիս հանգել է ճիշտ հետևության, և վերաքննիչ դատարանն անհիմն է բեկանել Դատարանի վճիռը և գործն ուղարկել նոր քննության, անտեսելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, համաձայն որոնց՝ դատավարական նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը վճռի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել գործի սխալ լուծման, դատարանի՝ ըստ էության ճիշտ վճիռը չի կարող բեկանվել ձևական նկատառումներով:

Այսպիսով, Գերագույն դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանի դատական ակտը բեկանելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Միաժամանակ, Գերագույն դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Գերագույն դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

Համաձայն ԼՂՀ Սահմանադրության 45-րդ հոդվածի 1-ին մասի՝ յուրաքանչյուր ոք ունի հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Գերագույն դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Գերագույն դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է: Առաջին ատյանի դատարանը դատաքննությամբ հաստատված փաստերի և իրավահարաբերությունների

նկատմամբ կիրառել է նյութական և դատավարական իրավունքի համապատասխան նորմերը և կայացրել օրինական և հիմնավորված վճիռ:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով՝ ԼՂՀ Գերագույն դատարանը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հայցվոր Աշոտ Բորիսի Դանիելյանի վճռաբեկ բողոքը բավարարել:

ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2015թ. մարտի 19-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2015թ. հունվարի 13-ի վճռին:

2. Սամվել Ալեքսեյի Ավետիսյանից հոգուտ Աշոտ Բորիսի Դանիելյանի բռնագանձել 20.000 /քսան հազար/ ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար մուծված պետական տուրքի գումար:

3. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝

Ի. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝

Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Վ. ՀՈՎՍԵՓՅԱՆ